



երկամասրդ ունի 1 ր., 1 խիցանց 50 Կ., Այգ-  
վազանց 1 ր.: Ոչ ուսանողներ Գոստինցեան  
(աժտարխանցի) 10 ր., Գէորգ Շիշմանեանց 10  
ր.: Ընդամենը 46 ր. 30 Կ.:

Պատուական «Մշակի» խմբագրութեան ու-  
ղարկում ենք 46 րուբլի, իսկ 30 Կոպէկ գործ  
ենք դնում ճանապարհածախսի:

Ենդիրարեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պարսն օրիսմանիստի դասախօսութեան ժա-  
մանակ ցոյց տուած հայկական Կերպաս-  
ները իրանց նուրբ գործուածքով, գեղեցիկ  
նկարներով և զուարթ գոյնով այնպիսի մեծ ներ-  
գործութիւն են արել շատերի վրա՝ որ այժմ  
ամենայն տեղ յայտնում են մեծ ցանկութիւն  
ուրախութեամբ հազնել դրանցից, եթէ հարբ  
լինի ձեռք բերել: Խորհուրդ կը տայինք մեր  
տեղական վաճառականներին բանալ առանձին  
խանութ «հայկական ապրանքներ» անունով:  
Հաւատացնում ենք, որ մեծ քանակութեամբ կը  
տանին հայկական ապրանքներ նոյն իսկ հեռա-  
ւոր դաւաններէ: Այդպիսով նախ կը շահվին  
հայ վաճառականները, երկրորդ՝ Հայաստանի ար-  
դիւնագործութիւնը կենսականութիւն և գործա-  
դրութիւն ստանալով, խիստ կը զօրանայ և վեր-  
ջապէս մեր դրամային հարստութիւնը Հայաս-  
տանում կը ժողովի:

Լսում ենք, որ Ներսիսեան դպրանոցը  
այս վերջին տարիները խիստ մեծ ուշադրու-  
թիւն է դարձնում Հայաստանի ուսումնասիրու-  
թեան վրա և այդ նպատակով նշանակել է առան-  
ձին դասեր Հայաստանի աշխարհագրու-  
թեան համար թէ վերին և թէ ստորին դասա-  
րաններում: Այժմ էլ հիմնում է հայկական թան-  
գարան, ուր պէտք է դնուի Հայաստանի ա-  
մեն տեղերի արդիւնագործական և արդիւնագոր-  
ծական հարստութիւնները:

Այս տարի Ներսիսեան ուսումնարանի հո-  
թերորդ դասարանը կրկին բացվում է մանկա-  
վարժութեան համար հրաւիրված է պ. Բաճախ-  
րեանը, որ հաշվեկցատ որպէս «երեւել մանկա-  
վարժ» ուսու լրագրողներում...

Լսում ենք, որ Վրաստանի և Իմերէթի թեմա-  
կան վերառեսուց Գ. Բարնաւդարեանը առաջի-  
կա անպտեմբերից մտադիր է անպայման բոլոր  
հայ ուսումնարաններում մտցնել Հայաստանի  
աշխարհագրութիւնը իրեն առանձին ա-  
ւարկայ և նրա վրա առանձին ուշադրութիւն  
դարձնել: Երեսու որ այդքան ուշ են հասկա-  
նում մերայինք Հայաստան ուսումնասիրելու  
հարցը, բայց լաւ է ուշ, քան երբէք:

ՇՈՒՇՈՒՅՑ, պ. Տ. Նաղարեանց խնդրում է  
մեզ յայտնել հետեւեալը: «Ըստ տեսու մեր հրա-  
տարարութիւնների կրթող զբոյժը «Երկու  
Մանրավէպ» (Լրտես տղան և Մէլիլինի ընծան),  
Ալֆոնս Գոգէի, Գիւնի 15 Կ. Հասցէն Шума,  
Тиграну Назарянц»:

ՇՈՒՇՈՒՅՑ մեզ գրում են. Անցան ամիսներ,  
դեռ տեղային դպրոցի հոգաբարձութեան ընտրու-  
թիւնը չէ վերջացած: Այսպիսով ոչ միայն զբո-  
րոցը մնացել է անտէր, այլ ահագին եկեղեցա-  
կան կալուածներ, որ հոգաբարձութեան կառա-  
վարութեան ներքոյ էին, և որոնցից դպրոցը  
խրաբանչիւր տարի հազարներով եկամուտ էր  
տանում, մնացել են առանց հսկողութեան:  
Մի քանի թուրք բէկեր արդէն սկսել են յիշեալ  
եկեղեցական կալուածների մասին դատ բաց ա-  
նել և խնդրել են ներկայացրել, բայց թէ դպրո-  
ցի և թէ եկեղեցու իրաւունքները այդ կա-  
լուածքների վերաբերութեամբ պաշտպանող չը  
կայ. շատ հասկանալի է, որ թուրքերը կը վա-  
ստակեն դատը: Նամակներով աւելացնում է, որ  
խառվութիւնների պատճառը տեղային յաջորդն  
է, որ ժողովրդի մէջ երկպառակութիւն սերմա-  
նելով, ամեն ինչ քանդում է:

Մեզ գրում են ՇՈՒՇՈՒՅՑ: Այս օրերում վախ-  
ճանկեցաւ մի հարուստ վաճառական Ա. Խ. հո-  
գեհանդատի օրը քննելու տուեցին հանգուցեալի  
նոյաւ փրկութեան համար, որի վրա ծախվեցաւ  
աւելի քան 2,000 ռուբլ: Աւելի լաւ կը լինէր

այդ գումարը մի այլ բարեգործական նպատակի  
համար գործ դնելին:

ՇՈՒՇՈՒՅՑ գրում են միզ, որ մի նշանաւոր  
կուրս պատահեց մի խաւի թուրքերի և հայերի  
մէջ, որը կարող էր վտանգաւոր կերպարանք  
ստանալ, եթէ ոստիկանութիւնը չուտ վրա չը  
համեք:

Պ. Արեւ Ապրիսեանցը ՇՈՒՇՈՒՅՑ խնդրում է  
մեզ յայտնել, որ նա ստանում է անդադար ծը-  
րարներով 1-ր. Բաճիկի «Երեւել» վէպի հա-  
մար, մինչդեռ նրա դինը 1 ր. 20 Կ. է: Եթէ  
մէկ րուբլի ուղարկողները չը լրացնեն պակա-  
սորը, նրանց գրեթէ ուղարկելի, կարող են ի-  
րանց փողը յետ տանալ:

ՇՈՒՇՈՒՅՑ գրում են մեզ, որ այս տարի առատ  
անձրեւներից յետոյ թէ ցորենի և թէ միւս բեր-  
քերը խիստ առատ են, բայց չեղած սերմերը  
մեծ մասամբ փչացան անձրեւից: Այս տարի տե-  
ղային մետաքսը խիստ սակաւ կը լինի և բո-  
ժոժները վատ:

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում  
է «Մշակի» խմբագրատան մէջ, այլ և Թիֆլիսի  
հայ գրաւաճառների մօտ Բաճիկի «Երեւել»  
թիւի անունով վէպի առաջին և երկրորդ մա-  
սերը միասին կառաված: Գրքը քաղկազում է  
440 երեսներից, տպւած է մաքուր թղթի վրա:  
Գինն է 1 ր. 50.: «Երեւել» երրորդ մա-  
սը նոյնպէս լոյս կը տեսնի առանձին գրքով,  
կրթ նրա տպագրութիւնը «Մշակի» մէջ աւարտ-  
ված կը լինի, որովհետեւ «Մշակի» մէջ տպւելով,  
մի և նոյն ժամանակ առանձին րոտիւր է կազմ-  
վում:

Այսօր, հինգշաբթի, յունիսի 11-ին պ. Ա.  
գամէտն տալիս է Պալկի թատրոնում իր հը-  
րաժնէի երկուցից: Երկուցից քաղկազում կը  
լինի երաժշտական և դրամատիկական երեք  
մասերից: Առաջին մաս. «Փարիզի աղքատներ»  
դրամայի առաջաբան: Երկրորդ մաս. երաժշտա-  
կան և գրական...: Երրորդ մաս. Շիլլերի  
«Ալադինի» չորրորդ գործողութիւնը: Կը  
մասնակցեն. Թիֆլիսի Չմիկեան, օրիորդ Պօպով,  
պ. պ. Սիմեան (որ կաճէ ջութակի վրա), Լեւ-  
րով, Չմիկեան, Աւարեան և Տէր-Գաւթեանց:  
Սկիզբը 8 ժամին, Գնեք սովորական են:

Քաղաքում լուրեր են տարածված որ Թիֆլի-  
սի սուրբ Նինայի օրիորդական դպրոցում և  
օրիորդական ինստիտուտի գանձարաններից բա-  
ւական մեծ գումարներ են վաճառված: Այդ եր-  
կու հիմնարկութիւնների մէջ գանձապահը իշ-  
խան Սիդամոն Երիստովն է: Ասում են որ կո-  
րած գումարը հասնում է 120,000 ռուբլի:

Երևանի փոստատան կառավարչի նամակին,  
որ տպւած էր նորերումս «Մշակի» մէջ, մենք  
կարող ենք պատասխանել հետեւեալը: Մեզ անհ-  
նարին է մասնագիտցն անել փոստատան այն ծա-  
ռայողների անունները վրա, որոնք իրանց սե-  
փականացրել են լուսանկարներ և գրքեր, բայց  
հրաւիրում ենք մեր թղթակցին յայտնել թէ ու-  
թեր են եղել, որոնք չեն ստացել իրանց անու-  
նով ուղարկված նամակները, լուսանկարները և  
գրքերը:

Լսում ենք որ Թիֆլիսում հիմնվել է մի բա-  
ժանորդական ընկերութիւն դեղատան ապրանք-  
ները ծախելու: Ընկերութիւնը կը կրի «Գեղա-  
տան ապրանքներ ծախող կովկասեան ընկերու-  
թիւն» անունը: Ընկերութեան բաժանորդու-  
թիւնը արժէ 500 ռուբլ և բոլոր բաժինները ար-  
դէն վեր առած են, այնպէս որ ընկերութեան  
հիմնական գրամաղուլը հասնում է 150,000  
ռուբլ գումարի: Ընկերութիւնը նպատակ ունի,  
երբ նրա գործերը կընդարձակվեն, բայց ապ-  
րանքների ծախելուց, ձեռք առլ և դեղատան  
նիւթերի տեղական արդիւնաբերութեանը: Չէ  
կարելի չը համակրել այդ տեսակ օգտաւէտ հիմ-  
նարկութեանը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄՈՒՆԻՍ

Կայսերական պարլամենտը, քննելով բան-  
ւորներին ապահովելու օրինագիծը, հաս-  
տատեց 12—42 յօդուածներ: Նրանցից  
նշանաւորը 13-դ յօդուածն է, որ վերաբե-  
րում է ապահովական վարձատրութեանը:  
Պարլամենտը մերժեց այդ յօդուածի կա-  
ռավարչական խմբագրութիւնը և ընդունեց  
մանաւթողովի խմբագրութիւնը, որի համե-  
մաւ ապահովական վարձատրութեան 2/3  
վճարում է գործատւը, իսկ 1/3 գործաւորը:  
Վերջինի մասը կարելի է վճարել աղքատ-  
ներին օգնող քանձարաններից: Այդ հարցի  
մասին վիճարանութիւնների ժամանակ պար-  
լամենտի սօցիալիստական կուսակցութեան  
անդամները մէկը պաշտպանեց Առեւի  
առաջարկութիւնը, որի համեմատ ապահո-  
վական վարձատրութիւնը պէտք է ամբող-  
ջապէս գործատւը վճարէ:

Ճառախօսը ստաց, որ ստիպել բանւորին  
վճարել վարձատրութեան մի մասը, կը նը-  
շանակէ խիւղ նրանից մի ձեռքով այն, ինչ-  
որ տրվում է միւսով: Բացի այդ, նրա կար-  
ծիքով, օրէնքը կատարաւ չէ, քանի որ  
բանւորները մի մասը ապահոված կը լինի,  
իսկ միւսը ոչ: «Եթէ այդ օրէնքը չէ վի-  
րաբերում բոլոր բանւորներին, ասաց նա,  
ուրեմն ո՞ր է այն գործնական քրիստոնէս-  
կան ոգին, որի մասին այստեղ խօսում էին:  
Ես օրինագծի մէջ տեսնում եմ մի ինքնու-  
րոյն ոգի, որ մի քանի հարկատուներից  
գրամ է վերցնում և տալիս է նրանց, ու-  
րանք արտօնութիւն ունենալ»:

Առաջագէտ Բիխտեր յարձակվում էր իշ-  
խան Բիսմարկի ամբողջ ներքին քաղաքա-  
կանութեան վրա: Այն առաջարկութիւնը,  
որի համեմատ պետութիւնը պէտք է տալ  
բանւորին ապահովական վարձատրութեան  
մեծ մասը, Բիխտեր մի միջոց է համարում  
բանւորներին սարկացնելու համար: «Այդ-  
պիսով, ասաց նա, մենք յետ կը դառնանք  
ոչ թէ 1848 թ., այլ 1808 թ., Ֆրիդրիխ-  
Մեծի ժամանակներին, երբ գիշերներով  
բռնում էին գիւնդներին և երբ երկիրը  
կառավարվում էր տասնապետի փայտով»:  
Մտացած յօդուածները վիճարանութիւններ  
չը ծագեցրին: Բայիստագի նիստերը յետա-  
ձգված են մինչև յունիսի 9-ը: Ընտրողա-  
կան շրջանը արդէն սկսվել է:

Գերմանիայի մէջ շատ են խօսում ներ-  
քին գործերի միևնույն Պուալամերի վերջին  
շրջաբերականի մասին, որ խոստանում է  
համայնքներին ուսումնարաններից վերցնող  
հարկերը փոքրացնել, եթէ կառավարու-  
թեան ձեռնարկած հարկային վերանորո-  
գութիւնները կաշողվեն, այսինքն եթէ ա-  
ռաջիկայ ընտրութիւնները ժամանակ այն-  
պիսի պատգամաւորներ կուղարկվեն ըսկա-  
տաք, որոնք համակրում են իշխան Բիս-  
մարկի քաղաքականութեանը: Այդ շրջա-  
բերականով ընտրողական արշաւանք է ըսկա-  
վում առաջագիծների և ազգային-ազատա-  
ւորների դէմ: Կիսապաշտօնական լրագիր-  
ները մեղադրում են այդ երկու կուսակցու-  
թիւններին, իբր թէ նրանք գրգռում են  
Համբուրգ քաղաքին ընդդիմանալ կառավա-  
րութեանը:

ԱՆԳՆԻՍ

Յունիսի 5-ին Լոնդոնում Հայդպարկի  
մէջ կայացաւ իրանդական ժողով, որ շատ  
բազմամարդ չէր անձրեւի պատճառով: Այս  
նու առնալիւ պարկի մէջ մի քանի խումբ  
բեր էին հաւաքվել: Պարեն մի ճառ ար-

տասանեց, որով պահանջեց Ֆերմերներին  
արտաքսել դադարեցնել և Ֆորստերի  
հրաժարականը, որի վարչական եղանակը  
իրանդացիների համբերութիւնը կարեց:  
Խօսեցին նոյնպէս իրանդացի մի քանի այլ  
պատգամաւորներ, որոնք սաստիկ պախա-  
րակում էին իրանդիայի մէջ գործադրվող  
արտաքս կարգի միջոցները: Նրանց կարծի-  
քով անհրաժեշտ է դադարեցնել Ֆերմեր-  
ներին արտաքսելը և ազատել բնակից իր-  
անդական միութեան կալաւարոված ան-  
գամներին:

Նոյն օրը Պարենի քոյրը մի ճառ ար-  
տասանեց իրանդիայի մէջ, բազմամարդ  
ժողովի առաջ:

«Daily News» լրագիրը խորհուրդ է  
տալիս կառավարութեանը դադարեցնել Ֆեր-  
մերներին արտաքսելը, որպէս զի իրանդիա-  
յի մէջ ապստամբութիւն չը ծագի:

Մի աստիճանաւորի վրա, որ կամենում էր  
արտաքսել Ֆերմերին իրանդիայի կոմսու-  
թիւններից մէկում, մի քանի կանայք յար-  
ձակվեցան: Աստիճանաւորը հասնեց իր բե-  
ւոյվերը և ուղղեց նրան մի կնոջ վրա: Այդ  
ժամանակ նրա վրա յարձակվեցան բազմա-  
թիւ կանայք, իսկեցին նրա բեւոյվերը, ար-  
ձակեցին օդի մէջ, հասնեցին աստիճանա-  
ւորի շորերը և կատարեալապէս մերկացրած  
նրան թողին փողոցի մէջ ընկած:

Անգլիական լրագիրները հաղորդում են,  
որ ուսաց կառավարութիւնը մտադիր է  
Եւրոպայի մայրաքաղաքների մէջ պոլիցիա-  
կան կայարաններ հիմնել յեղափոխական-  
ների վրա հսկելու համար: Ճեննիվի մէջ  
պոլիցիական չորս գործակաւորներ կը լի-  
նեն և երկու ծառայողներ: Նոյնաման կա-  
յարաններ կը հիմնվեն Լոնդոնի, Փարիզի,  
Վիեննայի, Բեռլինի և Հոսթի մէջ:

ԲՕԼԳԱՐԻՍ

Բոլգարիայի մէջ կատարվող անցքերը  
գրաւում են պետութիւնների ուշադրու-  
թիւնը, որոնք արդէն բանակցում են ի-  
րանց այն ընթացքի առիթով, որ նրանք  
պէտք է բռնեն, եթէ իշխան Ալեքսանդր  
հրաժարվի բոլգարական դահլից: Բ. Գոուը  
այդ բանակցութիւններին չէ մասնակցում  
«Times» լրագրի տեղեկութիւնների հա-  
մեմատ, պետութիւնների մէջ այն համոզ-  
մունքն է տիրապետում, որ պէտք է ազա-  
տութիւն տալ բոլգարացիներին իրանց ներ-  
քին գործերի վերաբերութեամբ, քանի որ  
նրանք չեն լանդարի Բեռլինի դաշնագրով  
որոշված սահմանները:

Լոնդոնի լրագիրները հաղորդում են, որ  
Ֆրիդրիխսդորֆը հասաւ Սօֆիա բոլգարական  
էպարխոսը և անուանի բոլգարացիներից ժո-  
ղով կազմեց, որ պէտք է քննել գանաղան  
միջոցներ իշխանին ժողովրդի հետ հաշ-  
տեցնելու և համաձայնութիւն կայացնելու  
համար: Էպարխոսը ձեռնարկած գործի ա-  
ջողութիւնը կասկածելի է:

Եթէ իշխան Ալեքսանդր հրաժարվի բոլ-  
գարական դահլից, նրան կը յաջորդէ Գա-  
նիայի թագաւորի փոքր որդի իշխան Վոյ-  
դեմար, որի եղբայրը յունական թագաւոր  
է, քոյրերից Մէկը Ռուսաստանի Կայսե-  
րուհի, իսկ միւսը Ռուսի իշխանուհի:  
Անկեղէն է, որ իշխան Վոյդեմար մեծ  
պաշտպանութիւն կը գանի: Կարծում  
են, որ իշխան Ալեքսանդր ուրախութեամբ  
կը հեռանայ Բոլգարիայից, եթէ կը հա-  
մոզվի, որ բոլգարացիները անապրեր են  
մնում դէպի նրա հրաժարականը: Այս  
դէպքում օտար պետութիւնները կառա-  
ջարկեն իշխան Վոյդեմարին:

Բայց արական նախկին միջոցով ցանկով մի նամակ գրեց ռուսաց հաւատարմատարին Սօֆիայի մէջ, որով նա մեղադրում է իշխան Ալեքսանդրին սահմանադրութիւնը խախտելու մէջ։ Ռուսաց հաւատարմատարը այդ նամակը յանձնեց բոլորական կառավարութեանը, առաջարկելով դատաստանի ենթարկել ցանկովին։

Օրէնսդրական ժողովի անդամները ընտրութիւնները նշանակված են յունիսի 27-ին, որպէս զի իշխանը միջոց ունենայ վերջացնել իր ծանապարհորդութիւնը Բոլորականի մէջ։

Չափերի ակադեմիայի ուսանողները 170 ստորագրութիւններով ծածկված մի նամակ ուղարկեցին նախկին միջոցով Կարապետին, որի մէջ յայտնում են, թէ բոլորակցները պէտք է բոլոր միջոցները գործ դնեն և մինչև անգամ իրանց կեանքը գոհեն ձեռք բերած իրաւունքները պահպանելու համար։ Սկզբնական մի քանի պատգամաւորներ էլ այդպիսի նամակներ ուղարկեցին։ Բերկայի նահանգի բնակիչները արտաքսեցին կառավարական գործակալներին։ Բոլորականի մէջ պատերազմական գրութիւն է յայտնված։ Վերջինի պրոկլամացիան կաշառութեամբ է։ Առհասարակ գործերի գրութիւնը չափազանց անհասկացանելի է։

ՖՐԱՆՍԻԱ

Ֆրանսիական մամուլը գրադրած է վիճաբանութիւններով ընտրողական նոր օրէնքի հարցով և ընդունված սենատի բռնած ընթացքը պատգամաւորների ժողովի վճռի վերաբերութեամբ։ Արդեօք Ֆրանսիական սենատը իրաւունք ունի՞ փոխել պատգամաւորների ժողովի այն վճիռը, որ վերաբերում է պատգամաւորների ընտրութեանը։ Ոչ ոք չէ հերքում, որ սենատը իրաւունք ունի իր հասկացողութեան համեմատ գնահատել պատգամաւորների ժողովի ներկայացրած օրինագիծները, բայց այս անգամ սենատը բարոյապէս իրաւունք չունի փոխել պատգամաւորների ժողովի վճիռը։ Սենատի ընդդիմադրութեան դէմ այդ հարցի վերաբերութեամբ գումարնետայի կուսակցները ստում են, որ փասնաւոր է երկու ժողովների մէջ թշնամութիւն յարուցանել և որ կարող է հարց ծագել բոլորովին ոչնչացնել սենատը իբրև մի հիմնարկութիւն, որ սահմանափակում է ժողովրդի ներկայացուցիչների ազատութիւնը։

Գամբետայի «République Française» լրագիրը համառօտութեամբ երկու ծանապարհ է ցոյց ապրիս սենատորներին կամ հաստատել պատգամաւորների ժողովի վճիռը, կամ հաշտվել սենատը ոչնչացնելու մտքի հետ։ Այսպիսի յօդուածները տեղի էլ կարող են գայրացնել սենատին և դրդել նրան պահպանել իր հեղինակութիւնը, չը նայելով քանազան սպառնալիքներին։ Այնքան է, որ Գամբետայի բարեկամները իրանց համար անաջողութիւն են պատրաստում իրանց չափաւանց մեծ կռաւիպի։ Եթէ սենատը իրաւունք չունի հաստատել կամ մերժել պատգամաւորների ժողովի ընդունած օրինագիծը, ուրեմն սենատի գոյութիւնը աւելորդ է։ Սենատը իսկապէս հիմնված է իբրև օրէնսդրական երկրորդ խորհուրդ օրէնքների վերաքննելու համար և, եթէ նա չը կատարէ իր այդ պաշտօնը և բաւականապէս միայն հաստատելով զանազան օրինագիծները ստանց նրանց փոփոխելու, այն ժամանակ նա կապացուցանէ իր զոյութեան ապարդիւն լինելը։ Այս

անգամ սենատը աւելի էլ մեծ կասկածանքով կարող է վերաբերվել պատգամաւորների ժողովի վճռին, որովհետև նրան նպաստել են հանրապետականները և բոլորակցները։ Սենատը հետ շատ քիչ համերաշխ են։

Հանրապետութեան շահերին նայելով, աւելի լաւ կը լինէր հրաժարվել ընտրողական ձևի փոփոխելուց, քանի որ այդ փոփոխութիւնը պէտք է ձեռք բերել հանրապետականների անհամաձայնութեան զբաղմունքի նշանակելու հետ, Ֆրանսիական սենատը աւելի մեծ նշանակութիւն է տալիս հանրապետութեան նախագահ Գրեվի կարծիքին ընտրողական հարցի վերաբերութեամբ։

Նորբուրում Ֆրանսիական կառավարութիւնը նախագրուեցանց պապին, որ նա յետ կը կանչէ իր ներկայացուցչին Վատիկանից, եթէ հոգեւորականները Ֆրանսիայի մէջ կը խառնվեն ընտրութիւնների մէջ և քանազան ցոյցեր կանեն։

Տունիսից ստացված տեղեկութիւններըց երևում է, որ բէյը մեծ պատրաստակաւ նույնիման կատարում է Ֆրանսիացիների ցանկութիւնը։ Գրեվի, տեղեկանալով, որ բէյը մտադիր է մի գետնան ուղարկել Փարիզ, յայտնեց նրան, որ Ֆրանսիական կառավարութիւնը մեծ ուրախութեամբ կընդունի Տունիսի դեսպանին։

ԹԻՐԻԲԻԱ

Միտհագ-փաշային կաշառութեամբ մանրահարգում են հետեւեալ տեղեկութիւնները։ Ննչպէս յայտնվում է, Միտհագ-փաշա չը յանձնվեցաւ թիւրքաց իշխանութեանը Ֆրանսիական հիւպատոսից, այլ Ֆրանսիական դեսպանատան վճիռը իմանալուց առաջ նա ցանկութիւն յայտնեց թիւրքի հիւպատոսին։ Միտհագ-փաշա փարվեցաւ այդպէս թիւրքաց արդարութեան միջոցով։ Հետեւեալ հեռագրից կարգված. «Նա չէի հաւատայ այն լուրին, որ դուք ծածկվել էք Ֆրանսիական հիւպատոսի մօտ, եթէ նա պաշտօնապէս չը ստացվէր։ Գուց յայտնում էք, որ կը ներկայանաք Կ. Պօլիս դատարանին այն պայմանով, որ պետութիւնների հովանաւորութեան տակ լինէք։ Ձեզ պէտք է յայտնի լինի, որ անկարելի է հովանաւորել յանցանքի մէջ մեղադրված մի անձին։ Մեր դատարանները յայտնի են իրանց արդարութեամբ և անկողմնապահութեամբ։»

Ֆրանսիական հիւպատոսը մինչև անգամ իրաւունք չունէր յանձնել Միտհագի թիւրքաց իշխանութեանը, որովհետև նրա ծածկվելուց յետոյ բոլոր հիւպատոսները մի պրոտօկոլ էին կազմել և յայտնել էին, թէ Միտհագ-փաշա ժամանակաւորապէս բոլոր հիւպատոսների հովանաւորութեան տակ է գտնվում։

Քիւրդերի շէյխ Նրադուլլահ մի շրջաբերականով հրաւիրել է Գիւրբեքի թիւրքերին պատերազմել Պարսկաստանի դէմ, ասելով, թէ Բ. Գրան և Պարսկաստանի յարաբերութիւնները այժմ ամենաբարեկամական են և թէ ստորիկ կը պատժվեն նրանք, որոնք կը կատարեն շէյխի հրահրը։

«Standard» լրագիրը հարցրելով են, որ Եանիսայի նահանգապետի հրահրը այլ բանցիկներին՝ Յունաստանին ընդդիմադրելու համար այն նպատակով էր արված, որ կաշառութիւնը ալբանական շարժման առաջնորդները Այդ խորամանկութիւնը աշող-

մեղաւ և այժմ 10 ալբանցի առաջնորդներ կաշառութեամբ են Պրեզիդէնտի բանտի մէջ։ Ասում են, որ Եանիսայի նահանգապետի խորամանկ միջոցը մեծ հարուած հասցրեց այլանցիկներին, որոնց այժմ սարսափ է տիրել։

Աւագակութիւնները Սալօնիկի շրջակայքում, Էպիրոսի և Թէսսալիայի մէջ, հետզհետէ սաստկանում են։ Նորբուրում 150 մարդուց կազմված աւագակների մի խումբ մօտեցաւ Էպիրոսի գիւղերից մէկին։ Աւագակապետը, որ մի կին է եղել, մտաւ գիւղը և պահանջեց գիւղացիներից պաշարներ իր զօրքերի համար։ Գիւղացիները, աւագակներին կանօնաւոր զօրքերի տեղ ընդունելով, շտապեցին կատարել այդ պահանջը, իսկ աւագակները շրջապատեցին նրանց, կողակցեցին և պատանդ վերցրին չորս տղամարդ և չորս կինարմատ, որոնց համար 20,000 թիւրքաց լիրա փարձատրութիւն են պահանջում։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Կ. Պօլիսից հեռագրում են «Daily News» լրագիրը որ սուրբանը նշանակել է մի յանձնաժողով որ պէտք է մշակի բեֆօրմների ծրագիրը, համաձայն բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածին, որ պարունակում է իր մէջ Հայաստանի վարչութեան հիմքը։ Կառավարութիւնը դիտարկութիւն ունի ներկայացնել այդ պրոէկտը եւրոպական պետութիւնների ընդունելու և այդպիսով յանձն առնել վերանորոգութիւնները մտցնելու ինքիստիւլը։ Արժում են, մինչև անգամ, որ Բ. Գուրը կը հրատարակի մի պրոէկտ գաւառական հիմնարկութիւնների բեֆօրմների մասին, առհասարակ, և այդպիսով եւրոպական պետութիւնների միջամտութեան առաջ կանգնի։

«Gazette de Lausanne» հարցրելով է որ Յիւրիկ կանտոնի կառավարութիւնը արդեւ է գումարել Յիւրիկում սոցիալիստների միջադպրութիւնը, որ լինելու էր սպառնալիք ամենի։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բրիտանի քաղաքի մէկ քաղաքական, որպէս garde civique-ի անդամ, մասնակցելով պաշտական վերջին տեսութեան լինելուն Վիկտորյա, հետեւեալ էր պատմում միջոցաւորների խորհրդի նախագահ Բեյլիայի սիրված պետական անձին։ Ֆրէյ-Օրբանի կեանքից 30 տարի առաջ Ֆրէյ-Օրբան երիտասարդ պաշտօնեայ էր ֆինանսների միջնորդութեան մէջ, և իր ընդունակութիւններով մեծ յոյսեր էր տալիս նա. բայց նրա բոլոր հարստութիւնը յոյսերն էին։ Այնու ամենայնիւ, նա այնքան համարձակ էր, որ աչք բարձրացրեց մէկ հարուստ և հպարտ ազնուական ընտանիքի աղջկայ վրա Նաթիլութ։ Այդպիսի ցանկութեան անդունալ լինելը հասկանալի էր ամենքին, որովհետև ֆրանսիացի գեղեղ ազնուականը այնքան էր քաղաքական, որ իր աղջկայ ձեռքը տալ մի ուրիշ է գիւղացի պաշտօնեային։ Բայց Ֆրէյ-Օրբանի սրտի ընտրելին բաւական մեծ խելք և համարձակութիւն ունէր և վճռեց ինքն յաղթել այն բոլոր դժուարութիւններին, որոնք արդեւ լսելի էին լինում իրանց բողոքին։ Մի անգամ աղջկայ նամակով հրաւիրեց Ֆրէյ-Օրբանին մտնել երեկոյեան, թատրոնական ներկայացման ժամանակ, իր ծընոյնների լսման։ Երբ երիտասարդ մարդը եկաւ, աղջկայ կանգնեց, մօտեցաւ նրան, գրկեց և համբուրեց նրան բոլոր հասարակութեան առաջ, չը նայելով իր ծնոյնների սարսափին և զարմանքին։ Ինքն իրան հասկանալի է, որ այն տեսարանը իր աղջկայութեան ունեցաւ աղջկայի սկանդալից յետոյ ծնոյնների կողմից այլ ևս ոչ մի ընդդիմադրութիւն չէր կարող լինել, և սկիւրաբար նշանակել հենց նախ երեկոյ կատարվեցաւ։ Այդպիսով տիկին Ֆրէյ-Օրբան կատարելապէս տիրապետեց իր մարդուն։ Յոյսերը, այնու ամենայնիւ, ի դուր չանցան. այժման մի-

նիստը արագ բարձրանում էր հասարակական սանդուղքի մէկ աստիճանից դէպի միւսը. չորհիւ իր ճարտարախօսութեան, հաստատ բնաւորութեան և անշեղ դեմոկրատական ուղղութեան, Ֆրէյ-Օրբան, բեյլիական ժողովրդի սիրելի առաջնորդը դարձաւ։ Ֆրէյ-Օրբանի անունը ոսկէ տառերով է գրված Բեյլիայի պարլամենտական պատմութեան ժամանակագրութեան մէջ. նրա փառքը մինչև անգամ իր հայրենիքի սահմաններից դուրս էլ տարածվեցաւ։

Մէկ տիկին Ամերիկայում, կամենալով անուն ստանալ, բժիշկ Տաննէրի նման, վճռեց քառասուն օր լուր իր այդ դիտարկութիւնը նա առաւօտեան 9 ժամից սկսեց և երեք օր շարունակ քաջութեամբ տարաւ այդ բոսութիւնը։ Չորրորդ օրը նրա երակը սկսեց աւելի թոյլ լինել, չնչաւութիւնը կարճացաւ։ Հրաւիրված բժիշկը յայտնեց, որ հիւանդի կեանքին վտանգ է սպառնում, եթէ նա չընդհատի իր լուրերը։ Բժիշկի խօսքը և ծնոյնների աղաչանքը նրա վրա չաղդեցին։ Նա շարունակեց կանգնել լուրերին պահպանել։ Երկուշաբթի նրա կեանքի մասին աւելի և աւելի մեծացաւ վերջապէս, եօթնրորդ օրը նրա ծանօթներից մէկի զինում մի բաղաւոր միտք ծագեցաւ։ Նա սկսեց նրա ներկայութեամբ նրան յայտնի քանազան դէպքեր պատմել և ամեն կերպ աղաւաղում էր նրանց։ Այդպիսի լիրբ տեսարանները վրդովեց հերոսուհուն, որը յանկարծ բացեց լեզուն և տաք ժամ շարունակ խօսում էր ասանց հանցատանալու։ Այդպիսով նրա վճիռը ցանկացած եղբայրացիութիւններին չը հասաւ։

«Figaro» լրագիրը գիտնացնելի մայրաքաղաքի տեղադրութեան դիտարկութիւնը Ֆրանսիայում Մայնի վրա արդէն փաստ համարելով պատմում է այդ տոթիւթով հետեւեալ անէկզօտը. մէկ պրոտեստանտ օֆիցէր Նորբուրում Ֆրանսիայում մայր եկեղեցին այցելեց։ Եկեղեցական ապստամբը, ցոյց տալով նրան հնութեան քանազան յիշատակներ, նրա ուշադրութիւնը դարձրեց արժանի միայն խորհրդաւոր նշանակութեան մասին, սպասուածը ասաց նրան, որ հնուր անցեալում, երբ բոլոր Ֆրանսիայում կատարեալէս լցված էր միջերկր խմբերով և ոչնչով չը կարողացան օգնել այդ թշնամութեանը, ոչ հարկաւորաւոր կատարներ և բուրգոյներ, ոչ էլ զենքերը, այն ժամանակ մէկ աստուածապաշտ կին բերեց տաճարը, ուստադրութեամբ, այս արժանի մուկը, և միւս օրը բոլոր միջերկր կորան։ Պրոտեստանտ օֆիցէրը բարձր ձայնով սկսեց ծիծաղել։ «Միթէ Ֆրանսիայի քաղաքները այնքան պարզամիտ են, որ այդպիսի յիմարութիւններ պատմում են և հաւատում են նրանց», ծիծաղելով ասաց օֆիցէրը։ «Մէկը պատմում է, որ պատմական եկեղեցական ապստամբ և չնք հաւատում, որովհետև, եթէ հաւատալիս լինէինք, վաղուց արդէն ուստադրութեամբ կընծայէինք Ս. Աստուածածնուն արժանիքայ պրոտեստանտ»։

ՄԵՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄՍՍՆԱԻՐ ԹԱԳԱԿՑՆԵՐԻՑ

ՄՍՍԱՎԱ, 9 յունիսի։ Չէր լրագրի 98 համարի մէջ տպված լուրը կաթողիկոսի փանդաւոր հիւանդութեան մասին խոր ապագորութիւն է գործել այստեղի հայերի վրա։ «Մշակ» առաջարկութեան համեմատ դիտարկութիւն կայ այստեղից էլ պատգամաւորութիւն ուղարկելու լքմանը։ Հասարակութիւնը պահանջում է կաթողիկոսի առողջութեան մասին բիւլլետեններ։

ԵՐԵՒԱՆ, 9 յունիսի։ Վանից եկած ականատեսները պատր արգէս հաստատ հաղորդեցին, որ շէյխ Նրադուլլահ կաշառութեամբ է և պահվում է վանի բերդում։

ՄԵՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԿ, 9 յունիսի։ Երէկ իշխան Միլան ծանապարհ ընկաւ։ Պետերբուրգից դէպի Վիեննա, իսկ կռն Միլանին—Խրիմ։

ՍՕՖԻԱ, 8 յունիսի։ Բոլորական 99 գիւղերի բնակիչները քահանաների ներկայութեամբ երգվեցին սահմանադրութիւնը պաշտպանել։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԿ, 9 յունիսի։ Պաշտօնապէս հրամայված է սղի բոլոր նշանները փոխարինել, կրելով արմուկից բարձր ձախ ձեռքի վրա սև կապ, երկու վերջով լայնութիւն ունեցող հարթ բանտով։

ՄԱՐՍԻԱ, 8 յունիսի։ Այստեղ արհեստահեղ կոխներ պատահեցան Ֆրանսիացիների և իտալացիների մէջ, սպանված են 8, վիրաւորված են 23 մարդիկ, բանտարկված են 65 անձինք։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԻՆԻ

# Յ Ե Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

2ր նայելով մաքսերի աւելանալուն ապրանքները առաջվայ գներով կը ծախվին.  
**ԿՕՆԳՕ-ԹԷՅ** 1 ր. 5 Կ. և 1 ր. 10 Կոպ., շատ լաւ **ՄՕՆԻՆԳ** 1 ր. 20 Կ. և 1 ր. 40 Կ., հիանալի **ԿԱՅՍԱՆՈՒ** 1 ր. 60 Կ. և 1 ր. 80 Կ. և **ԱՄԵՆԱԼԱԻ** **ԹԷՅ** 2 ր. առանց թղթի: Անգլիական ըէֆօլիերներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200ր. Անգլիական խանութի մէջ: Գործակալութիւն **ԲԱՐՆԱՐԻ ԹԱՄԲԵՐԸ**, Զետտի **ԿՈՂՊԷՔՆԵՐԸ**, Տուրքի **ԳՐԻԶՆԵՐԸ** և Էկստրակտ կախա-  
շօխարի ծախելու համար, որոնք վարիչի հաւաքի ժամանակ ոսկէ մեղալ ստացան:  
**ՀՈՏԱԼԷՏ ԹԷՅԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՅԱՄԱՆՈՎ** 1 ր. 65 Կ. և ամենալաւ 2 ր. 30 Կ.: Սաւառականներին օգտուէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հազուստ 15 ր., կոնֆետներ հազի գէմ 60 Կ. ֆունտը:

89—100

ՐՕՍՏՈՎ ԳՕՆԷ-ՎՐԱ ՔԱՂԱՔԻ ԳՈՐԾԱՐԱՆՔԵՐ ԵՍ. Ս. ԿՈՒՇՆԱՐԵՅՈՎ յայտնում է հե-  
տեւորը. 1-ժ ծխախոտի արգիւնարեւո-  
թեան մեծ պահանջը զրոյեց Թիֆլիսի գոր-  
ծարանատէր Պիրայով և ընկ. և Գալե-  
գովին նմանակել իմ արգիւնարեւոթեան ձե-  
ւին զանազան անուններով, մանաւանդ «ԼՕ-  
ՐԻՍ-ՄԵԼԻՔՈՎ», «ԳԵՆԵՐԱՅ ԳԷՅՄԱՆ» և  
«ԳԵՆԵՐԱՅ ՍԿՕՐՈՒԵՎ»: Նախազգուշացնելով  
իմ ծխախոտը գործածողներին, խնդրում եմ  
ուշադրութիւն դարձնել իմ ֆիրմայի հե-  
տեւոր նշաններին վրայ. 1) Հրապարակական  
հաւանութիւն 1865 թուականի Մոսկովայի  
հանդէսից, 2) Ոսկեայ մեդալ Մոսկովայի  
տեխնիկական հանդէսից 1872 թ., 3)  
Պատուաւոր կարծիք 1873 թ. Վիեննայի  
աշխարհագրական, 4) մեծ մեդալ 1876 թ.  
Ֆիլադելֆիայի միջազգային աշխարհագրա-  
կան, 5) Արծաթէ մեծ մեդալ 1878 թ.  
Փարիզի աշխարհագրական, իսկ այդ նշան-  
ները չունենող արգիւնարեւոթիւնը խնդ-  
րեմ Կեղծ չԱՄԱՐԱՆ: ՄԱԿԵԳՕՆԻՍԷՅ ՆՈ-  
ւեւոր ստացայ ամենալաւ ՀՈՏԱԼԷՏ ԹԷՅ-  
ԻՈՏ: Լաւ յատկութեան ծխախոտ սիրող-  
ներին խնդրեմ գիտել Թիֆլիսի մէջ. Սպի-  
րիթոն Իվանովիչ Պոպովին, Բամազովին,  
Բայանդուրովին, Միկիրովովին, Բէժանո-  
վին, Տէր-Գրիգորեանց և ընկ. և Գէպոն, որ  
զանազան է Գոյովինսկի փողոցի վրայ, իշխան  
Բազարովին-Մուխրանսկու տանը: ԱՅԻ ԱՆ-  
ՁԻՆՔ ՈՒՂԱԿԻ ԻՄ ԳՈՐԾԱՐԱՆՔՆԵՐ ԵՆ  
ՍՏԱՆՈՒՄ ԾԽԱՆՈՏԸ:

Բոստովի 1-ն գիւղիայի վաճառական և  
ծխախոտի գործարանատէր ԵԱԿՈՎ ՍԵՄԵՅ-  
ՆՈՎԻՅ ԿՈՒՇՆԱՐԵՅՈՎ:

3—12

## «Ի Ե Ն Թ Ը»

ԱՐԿԱՇՆԵՐ ՎԵՐՁԻՆ ՌՈՒՍ-ԹՈՒՐԿԱԿԱՆ  
ՊԱՏԵՐԱԶՄԻՅ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ՐԱՅՖԻԻ

Տպագծ մաքուր թղթի վրայ, գիրքը բաղ-  
կանում 400 երեսից: Թիֆլիսում ծախվում է  
«Մշակի» խմբագրատանը, «Կենտրոնական  
գրադաճառանոցում», «Կովկասեան գրա-  
վաճառանոցում» պ. Զաքարիա Գրիգորեան-  
ցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բաղար-  
ջեանցի, Հովսէփեանցի ծխախոտի մագապի-  
ներում:

Գինն է 1 ռուբլ 20 Կոպ.:

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ

ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

10—10

## ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՅ ԳՈՒՐՄ Ե- ԿԱԻ ՐԱՅՖԻԻ «ԳԱԻԻԹ-ԲԷԿ»

անունով պատմական վեպի I և II հատոր-  
ները միասին կազմված: Գրքը բաղկանում  
է 440-երեսներից, ապակած է մաքուր թղթի  
վրայ Գինն է 1 ռուբլ 50 Կոպէի:

Ծախվում է «Մշակի» խմբագրատանը,  
Թիֆլիսի ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈ-  
ՅՈՒՄ, Զ. Գրիգորեանցի ԿՈՎԱՍՏԱՆ ԳՐԱ-  
ՎԱՃԱՌԱՆՈՅՈՒՄ, պ. պ. Շահինեանցի,  
Հովսէփեանցի և Տէր-Յովսէփեանցի մագապի-  
ներում:

Օտարաբաղադրեցիք կարող են գիտել  
«Մշակի» խմբագրատանը 3. ՄԵԼԻՔ-ՅԱԿՈ-  
ՒՅԱՆԻ հասցէով: 1—5

Un professeur de français, connais-  
sant parfaitement le français, le latin,  
le grec (dix ans de professorat), pren-  
drait répétitions ou bien pourrait pren-  
dre préceptorat ou leçons pour con-  
versation française et perfection de la  
langue. Pourrait se charger de faire  
faire les cours de gymnase à des en-  
fants qui parleraient déjà le français.  
S'adresser à la rédaction du journal  
arménien le «Mechak».

3—5

144 Արքունիութեան գաղտնի 144  
ամենաթանկ պահուած  
մաքուր և հայելիներ:

Ժողովիւ եմ, Ժողովում եմ և շուտով ի  
լոյս պէտք է ածեմ հայկական ձայնագրու-  
թեամբ «Մաղկաբաղ ձայնագրիկայ երգա-  
րան» ուստի խնդրում եմ ձայնագրագէտ-  
ներին և այն պարոններին, որոց մօտ գը-  
տանվում են ազգային երգեր թէ հայկա-  
կան և թէ եւրօպական ձայնագրութեամբ  
(նոտաներով) բարեհաճել մինչև յառաջա-  
կայ օգոստոս ամիսը ուղարկել ինձ: Երգեր  
ուղարկողներին ազգանունները կը ապա-  
գրուին երգարանի վերջը և մի-մի օրինակ  
էլ ձրիպագէտ կը ստանան: Վարձատրութիւն  
պահանջողները ևս կարող են իրանց պայ-  
մանները յայտնել: Իմ հասցէն: Տիֆլիս, Եգ-  
նիկ քահանայի երգիկանց:

**ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ** (աթոռներ և բաղկաթոռներ) ծախվում են մեծ  
քանակութեամբ և մանր, միջև փողոցում կատարիկաց փողոցի անկիւնում ՄԻ-  
ՔԱՅԵԼ ՏԵՐ-ՆԻԿՈՂՈՍԵԱՆԻ պահեստում:

Օտարաբաղադրեցիք կարող են գիտել այս հասցէով. Тифлисъ, Михаилу  
Н. Теръ-Никогосову.

17—150

Արդէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին ՐԱՅՖԻԻ «ԻՆԵՐԹ» անու-  
նով վիպասանութիւնը: Նոր գինը ցանկացողներին խնդրում ենք գիտել ՇՈՒՇԻ,  
կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահաթի-Յակոբեանցի տպարանը: ԲԱԳՈՒ  
պ. Այեքսանդր Թարխանեանցին, ՔԱՐՎԷՅ՝ պ. Գրիգոր Բէջանեանցին.  
Հրատարակչի հասցէն. Шуша, въ конторѣ Арумянца АБЪДУ АП-  
РԵՏԻԱՆՍՅՈՒ.

Կերականիկեանցի ՄԱԿ-ՄԱՍՍ-  
ՏԵՐ, մազերը ամրացնող և նրանց  
ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերադար-  
ձող: Գինը 2 ր. շերտ, ՓՈՍՏԱ-  
ՅՈՎ ուղարկված 2 ր. 49 Կոպ.:



Մի և նոյն տեղը **ԻՆԵՐԱՅԻ**  
**ԻԿՂ**, մազերը ամրացնող հա-  
մար, 1 ր. ամանը վրձին պիտա-  
յաւի գէմ, **ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱ-**  
**ՊՈՆ** և հոտուէտ ջրեր և այլն:  
78—100

| Ա Ն Գ Լ Ի Ա Կ Ա Ն Մ Ա Գ Ա Ջ Ի Ն Ո Ւ Մ |      |      |                           |    |      |       |   |   |   |
|---------------------------------------|------|------|---------------------------|----|------|-------|---|---|---|
| Համեմատեցէք թէյի ֆունտը               | 1 ր. | 5 Կ. | Մօսկվայից բերվող թէյի հետ | Փ. | 1 ր. | 30 Կ. |   |   |   |
| —                                     | —    | 1 ր. | 10 Կ.                     | —  | —    | —     | — | — | — |
| —                                     | —    | 1 ր. | 20 Կ.                     | —  | —    | —     | — | — | — |
| —                                     | —    | 1 ր. | 40 Կ.                     | —  | —    | —     | — | — | — |
| —                                     | —    | 1 ր. | 60 Կ.                     | —  | —    | —     | — | — | — |
| —                                     | —    | 1 ր. | 80 Կ.                     | —  | —    | —     | — | — | — |
| Ամենալաւը                             | —    | —    | 2 ր.                      | —  | —    | —     | — | — | — |

90—100

Թիֆլիսի հայոց ծխական ուսումնարանների ներկայ 1881 թ. տարեկան հարցաքննու-  
թիւնները

- Մայիսի 22 և 23-ին Կաթողիկէ Ս. Գէորգ եկ. ուսումն.
- » 25-ից—30-ը Հաւարարի Մարիամեան օր. ուսումն.
- » 28 և 29-ին Կուկիւր Թանդոյեան օր. ուսումն.
- » 30-ին Հաւարարի Ս. Մինաս եկ. ուսումն.
- Յունիսի 1 և 2-ին Կուկիւր Ս. Աստուածածին եկ. ուսումն.
- » 3 և 4-ին Զգրաշէն եկ. ուսումնարաններում:
- » 5-ին Շամբուեցոյ եկ. ուսումնարանում:
- » 6-ին Զորաբաշի Ս. Գէորգ եկ. ուսումնարանում:
- » 8-ին Ս. Կարապետ եկ. ուսումնարանում:
- » 9-ին Զուղուրէթի Ս. Աստուած. եկ. ուսումնարաններում:

Թեմական վերատեսուչ Բարխուդարեանց

## ԱՄԱՐԱՆՈՅՆԵՐ

Տիֆլիսից, մօտ 8 վերստ հեռավորու-  
թեամբ, — ԶԱԲԱՐԱՇԵՆՈՒՄ, փոքր Լիւլի մօտ,  
— վրաց խոյնիկայի (էս ճանապարհի վե-  
րայ տրվում են վարձով երկուս ԱՄԱՐԱՆՈՅ-  
ներ, իւրաքանչիւրը՝ երեք սենեակից բաղ-  
կացած իւրեանց առանձին խոհանոցներով:  
Գնի մասին կարելի է հարցնել տիրոջը—  
Զաք. Գրիգորեանցին — նորա գրախառու-  
թեամբ:

8—10

**ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 30% ԷԺԱՆ**  
**ՔԱՆ ԹԷ ՈՒՐԻՇ ՏԵՂ.** մուրաբա-  
ներ, կոնֆետներ, **ԿԱԿԱՍ**, բրինձ, Ա-  
ՄԱՆԵԼԷՆ, բօլալներ, թաներ, երես լուա-  
նալու ամաններ, չայնիկներ, ԲԱԿԱԿՆԵՐ,  
կիրակի ամաններ (судак), մատուցարան-  
ներ, ԿՈՂՊԷՔՆԵՐ, ԴԱՆԱԿՆԵՐ, գդալներ,  
ԳՐԻԶՆԵՐ, թուղթ, մախիաներ, տետրակ-  
ներ, ՀՐԱՑԱՆԵՐ, ԲԷՎՈՂԱՆԵՐ, պրօւմ-  
ներ, ՄԱՀԱԿԱՆԵՐ, ՀԱԳՈՒՍ, արիօ, պա-  
րուսին, Թաշկիւսաներ, երեսքիւններ, կլեօն-  
կա, գուլբաներ, ՔԱՄԲԵՐ, ՊՐՏՎԷՆ, իե-  
րես, կոնեակ և այլն: Թէ՛ մեծ քանակու-  
թեամբ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ համար ՊՈՒՂԸ  
44 ր., 46 ր., 48 ր., 50 ր., 52 ր., 54  
ր., և այլն: Այդ բոլորը կարելի է գտնել  
**ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ.**  
Մի և նոյն տեղը էժան գնով. ՇԷՐԲԵՏ մա-  
զնեղիա, խոր ծԱՐԱՒԻ գէմ, ԽԻՆԱՅԻ գի-  
նի ջերմի գէմ, կարթուսի ֆՕՇԷ, հեղուկ  
և ՍԱՊՈՆ, բժշկական թուղթ վատերկրօգի-  
տի համար, պարսկական փօշի: 13—100

ԺՈՂՈՎՐԳԱԿԱՆ ԱՄԱՆԻԹԻԻՆԵՐ—ՀԷ-  
ԲԻԱԹՆԵՐ. ԺՈՂ. ԵՐԳԵՐ. ԲԱՌԵՐ. ԱՌԱԾ-  
ՆԵՐ. ԱՆԷՄԲԵՐ. ԵՐԻՈՒՄԵՐ. ՀԱՆԵԼՈՒԿ-  
ՆԵՐ, և այլն, ուղարկող պարոններին խնդ-  
րում եմ այսուհետեւ ինձ հետեւալ հաս-  
ցէով գիտել:

Вагаршанатъ. Тигранъ Навасармянъ.  
8. Նաւասարեանց.  
4—6

## ՄԵԺԵՎՈՒ ԻՆԺԵՆԵՐ ՍԷՐ- ԳԷՅ ԻՎԱՆՕՎԻՉ ԲԱԳԱՏՈՒ- ՐՈՎ ընդունում է. կազմել ՅԱՍԱԿԱՏԵՐ

(պլաններ), գծագիրներ, պրօֆիլներ, կա-  
տարում է կալուածների, հողերի և ան-  
տառների բաժանումն զնախադրական  
գիտական հիմունքների վրայ, կատարում  
է ընդօրինակումներ (съемки) և հարթա-  
չափութիւններ (нивелировка) ԲԱԿԱՆՈՒՄ  
է ԱՆՏԱՌՆԵՐԸ կանոնադրապէս գործածե-  
լու համար, գնահատում է հողերը, ԽՈՐ-  
ՀՈՒՐԿՆԵՐ Է տալիս երկրաչափական և  
կալուածական գործերի վերաբերութեամբ  
և մի և նոյն ժամանակ կալուածական գոր-  
ծերի մէջ մասնագէտ լինելով իրաւաբանա-  
կան, տեխնիկական և տնտեսական կողմերից,  
պատրաստ է որ և է հիմնարկութեան հա-  
ւասարմատար լինել կալուածական և եր-  
կրաչափական գործերի համար: ՀԱՍՅԷՆ և  
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ թողնել «ՄԵԱԿ» խմբագ-  
րատանը: 10—10